ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.7-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Բրենդոն» ՍՊԸ-ի,
- «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի,
- «Գրիֆոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Բրենդոն» ՍՊԸ-ի,
- «Գրիֆոն Գրուպ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Բրենդոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

-1-ին ենթակետով պահանջված կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ հայտում .

-3-րդ ենթակետով պահանջված պորտֆոլիոն ներկայացված է առանց ստորագրության և կնիքի կամ էլեկտրոնային ստորագրության.

-6-րդ ենթակետով պահանջված ֆինանսական առաջարկով սահմանված բյուջեն (39.284.000) չի համապատասխանում հրավերի հավելված N2-ի համաձայն ներկայացված ֆինանսական նախահաշվով սահմանված բյուջեին:

- **«Գրիֆոն Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջվող կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ,

- 4-րդ ենթակետով պահանջված ծրագիրն ամբողջությամբ չի ներառում կամ չի մանրամասնում Հրավերի 2.4.1 կետով սահմանված գործողությունների ծրագիրը, մասնավորապես՝

Թվային մարքեթինգը պետք է իրականացվի հետևյալ հարթակներում (յուրաքանչյուր հարթակում ամսվա կտրվածքով 8-12 հատ հրապարակում)՝

- Facebook՝ ամսվա կտրվածքով առնվազն 8-12 հատ հրապարակումներ,
- Instagram՝ ամսվա կտրվածքով առնվազն 8-12 հատ հրապարակումներ,
- Youtube՝ տարեկան առնվազն 4 վիդեո,
- Google Ads,
- Tik-tok՝ ամսվա կտրվածքով առնվազն 8 հրապարակում:

Թվային մարքեթինգի արշավները պետք է իրականացվեն օգտագործելով հետևյալ հրապարակումների տեսակը/գործիքակազմը՝

- գրառումներ/հրապարակումներ/կարուսելներ (post),

Թվային հարթակներում գովազդը պետք է համապատասխանի հետևյալ չափորոշիչներին՝

• (Facebook, Instagram),

• Տեսանելիություն սոցիալական հարթակներում (Impression – all ads including posts and videos) – առնվազն 2,000.000 (յուրաքանչյուր ամիս բոլոր հրապարակումների համար),

• Հասանելիություն (Reach)–առնվազն 2.000.000 (յուրաքանչյուր ամիս բոլոր հրապարակումների համար),

• Ներգրավվածություն/Engagement (Like, comment, share) – յուրաքանչյուր գովազդվող հրապարակման համար առնվազն 800 հավանում յուրաքանչյուր հրապարակման համար (ամսվա մեջ մինչև 12 հրապարակում):

Տեսանելիություն սոցիալական հարթակներում (Tiktok)- առնվազն 4000:

Հոլովակների դիտում (YouTube) – առնվազն 300,000 դիտում մեկ հոլավակի համար:

Թվային հարթակներում իրականացված արշավների համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 10-ը:

• Ներկայացնել զեկույցներ, հաշվետվություններ՝ բեռնված բոլոր թվային հարթակներից, ընդ որում հաշվետվության ձևերը, ներկայացման ենթակա փաստաթղթերը և ներկայացման ժամկետները՝ համաձայնեցված ՀԿ-ի հետ:

Բոլոր հրապարակումների համար պետք է իրականացվի վիզուալ բովանդակության դիզայն և ադապտացիա՝ ըստ թվային պլատֆորմների առանձնահատկությունների: Վիզուալ և տեքստային բովանդակությունը պետք է համաձայնեցվի ՀԿ-ի հետ:

Մեկի՝

• **«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրով ներկայացված գործողությունները իրականացվելու են ոչ թե 10, այլ 9 ամսվա ընթացքում, մրցութային Հանձնաժողովի կողմից առաջարկվում է Ծրագրի ֆինանսական նախահաշվով նախատեսված աշխատավարձի չափը՝ 6 580 000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը կրճատել, իսկ կրճատված գումարի մի մասը վերաբաշխել հայտի ֆինանսական նախահաշվի ծրագրային ծախսեր հատվածի 2.8 կետին՝ կարծիքի առաջատար (ինֆլյուենսեր) հոդվածին: Միաժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, դրամաշնորհի վերջնական գումարը ևս շտկել:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

• «Բրենդոն» ՍՊԸ-ի,

• «Գրիֆոն Գրուպ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝

• **«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ**-ն:

3. **Առաջարկել «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ**-ին՝ հայտի ֆինանսական նախահաշվով նախատեսված աշխատավարձի չափը՝ 6 580 000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը կրճատել, իսկ կրճատված գումարի մի մասը վերաբաշխել հայտի ֆինանսական նախահաշվի ծրագրային ծախսեր հատվածի 2.8 կետին՝ կարծիքի առաջատար (ինֆլյուենսեր) հոդվածին: Միաժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, դրամաշնորհի վերջնական գումարը ևս շտկել:

Առաջարկը ընդունելու դեպքում շտկել Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին ներկայացնել շտկված տարբերակը:

4. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի** հետ՝ շտկված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում:

5. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____